Գևորգյան ճեմարան
Էլ. պարբերական

Gevorkian Seminary
E - Newsletter

Ա տարի, թիվ 1

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՉԻ ԱՅՑԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ԱԿԱԴԵՄԻԱ

Սույն թվականի հոկտեմբերի 12-ին Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը Մոսկվայի հոգևոր ակադեմիայի տեսուչ Եվգենի արք. Վիրեյսկու հրավերով մեկնել էր Մոսկվա՝ իր մասնակցությունը բերելու ակադեմիայի հիմնադրման 330-ամյա տարեդարձին նվիրված տոնակատարությանը:

Եվգենի արքեպիսկոպոսի գլխավորած պատվիրակությունը Մայր Աթոռ և ԳՀՃ էր այցելել դեռ անցյալ ամիս և գործնական հանդիպում ունեցել Ճեմարանի տեսչի հետ:

Մոսկվայում կայացած հանդիսության ընթացքում տեսուչ հայր սուրբն ընթերցել է Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի կողմից ուղարկված շնորհավորական գիրն ու հանձնել նվերը: Այնուհետև մասնակիցներին է ներկայացրել երկու եկեղեցիների գլխավոր հոգևոր կրթօջախների փոխգործակցության ներկա վիճակը:

Հավարտ հանդիսությանց՝ Գարեգին վարդապետը հանդիպումներ է ունեցել հոգևոր ակադեմիայի կրթական և կարգապահական գծերով պրոռեկտորների հետ և գործնական հողի վրա քննարկել երկու կրթօջախների համագործակցության առաջիկա ծրագրերը: Ճեմարանի տեսչին են միացել Մոսկվայում իրենց ծառայությունը բերող հոգևորականներ՝ Տ. Ներսես քհն. Խանանյանը և Մոսկվայում ուսումնառության նպատակով գտնվող Տ. Մինաս աբդ. Հախվերդյանը:

ՃԵՄԱՐԱՆԻ ՀԱՂԹԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԸ

Գևորգյան հոգևոր ճեմարանի սաներից բաղկացած «Լույս» թիմն այս տարի առաջին անգամ իր մասնակցությունն է բերել «Երբ բանավիճում են երիտասարդները» ակումբի կազմակերպած մրցույթին, որն իրականացվում է «Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն» հասարակական կազմակերպության և Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի կողմից: Հոկտեմբերի 17-ին կայացավ

մեր թիմի անդրանիկ հանդիպումը՝ «Անանուն» թիմի հետ: Թիմերը բանավիճում էին «Կարծրատիպը բացասական երևույթ է» թեմայի շուրջ: Վիճակահանության արդյունքում որոշվեց, որ Ճեմարանի թիմը պետք է ներկայացնի «համաձայն եմ» դիրքորոշում: Բանավեճի ավարտին՝ նախքան ժյուրիի վերջնական կարծիքը լսելը, տեղի ունեցավ հանդիսատեսի քվեարկություն, որն իր ձայնը տվեց Ճեմարանի «Լույս» թիմին: Այնուհետև իր միավորները բաշխեց ժյուրին, որը կրկին առավելությունը տվեց մեր թիմին: Այսպիսով՝ խաղի հաղթող ճանաչված Ճեմարանի «Լույս» թիմն իր ուժերն է փորձելու հաջորդ փուլերում:

ՀԱՏՈՒԿ ՍԵՄԻՆԱՐ ՀԻՎԱՆԴԱՑ ՀՈԳԵՎՈՐ ԽՆԱՄՔԻ ՄԱՍԻՆ

Հոկտեմբեր 19-ին Գևորգյան հոգևոր ճեմարանում սեմինարով հանդես եկավ ԱՄՆ Հայոց Արևմտյան թեմում իր սպասավությունը բերող բրշ. Սևան սրկ. Փալանջյանը:

Սեմինարի նպատակն էր երիտասարդ ճեմարանականներին փոխանցել հատուկ հմտություններ՝ հիվանդանոցային հովվական ծառայության մեջ առավել հաջող սպասավորություն բերելու համար: Հանդիպումն անցավ գործնական օրինակներով ու հետաքրքրական վերլուծություններով համեմված:

Հիշեցնենք, որ արդեն երկար տարիներ ճեմարանականների գործունեության ուղղություններից է հիվանդախնամությունը, և ժամանակակից անհրաժեշտ մեթոդներին ու հմտություններին ծանոթանալը կնպաստի այս գործունեության օգտակարության բարձրացմանը:

Վերջում բրշ. Սևան սարկավագին շնորհակալություն հայտնեց տեսուչ հայր սուրբը և հանդիպումը ավարտվեց աղոթքով:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԽՈՒԼԵՐԻ ԴՊՐՈՑ

Հոկտեմբերի 21-ին Գևորգյան հոգևոր ճեմարանի ժեստերի լեզվի խմբակի մի քանի սաներ հերթական անգամ այցելեցին Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր, որտեղ տեղի ունեցավ Սրբալույս մյուռոնին նվիրված միջոցառում: Միջոցառումը սկսվեց ժեստերի լեզվով ասված Տերունական աղոթքով, որից հետո ճեմարանականները ներկայացրին մյուռոնի ծագման պատմությունը, պատրաստման եղանակն ու խորհուրդը: Ձևավորված ջերմ և

անմիջական մթնոլորտում երեխաները ստացան իրենց հետաքրքրող հարցերի պատասխաններն ու կիսվեցին տպավորություններով:

Հիշեցնենք, որ Գևորգյան հոգևոր ճեմարանում ժեստերի լեզվի խմբակը գործում է արդեն 4 տարի:

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒՄ Է ԳԻՏՆԱԿԱՆԸ

Մեր զրուցակիցն է գիտությունների թեկնածու, աստղաֆիզիկոս, տոմարագետ Գրիգոր Բրուտյանը: Զրույցի թեման՝ գիտության և կրոնի առնչությունն է:

- Պարո՛ն Բրուտյան, դուք՝ որպես գիտության ոլորտի մարդ, ի՞նչ կապ եք տեսնում կրոնի և գիտության միջև:

- Այս հարցին, գրեթե միշտ, սխալ պատասխան են ակնկալում: Մարդիկ կարծում են, թե գիտությունը մերժում է կրոնը, և հակառակը, սակայն՝ ո՛չ: Կրոնի և գիտության խնդիրները տարբեր են, սակայն նույնն է նրանց նպատակը: Երկուսն էլ ծառայում են մարդու երջանկությանը, բայց տարբեր ճանապարհներով, քանի որ տարբեր են նրանց գործելու ոլորտները: Գիտության ոլորտը նյութական աշխարհն է, իսկ կրոնն աշխատում է մարդու ոչ նյութական մասի հետ, որն էլ մարդուն դարձնում է մարդ և, որին մենք կոչում ենք հոգևոր աշխարհ: Գիտության մեթոդները երկուսն են՝ գիտական փաստը և տրամաբանությունը: Գիտական փաստն իր հերթին ծնվում է գիտական փորձից կամ դիտումներից: Սակայն այս երկու պարզունակ գործիքներն ամենուր չեն կարող կիրառվել: Գիտության ոլորտը շատ սահմանափակ է. այն իր մեթոդներով չի կարող գործել նյութական աշխարհից դուրս, և եթե կասեն, թե գիտությունն ապացուցել է հավատքի այս կամ այն դրույթի ճիշտ կամ սխալ լինելը, արդեն իսկ սխալված կլինեն, քանի որ գիտության գործիքները հավատքի ոլորտում չեն գործում: Սակայն բոլոր մեծագույն գիտնականները՝ Նյուտոն, Դարվին և այլք, բոլորն էլ եղել են աստվածավախ մարդիկ: Օրինակ՝ Նյուտոնը հեղինակել է մի շարք աստվածաբանական երկեր, Դարվինն իր հերթին եղել է աստվածպաշտ անձնավորություն և չի ապացուցել այն ամենը, ինչ վերագրում են իր անվանը: Այսօրվա քննադատությունը հետին թվով փորձում է գիտնականներին վերագրել հակակրոնական միտք, սակայն ոչ մի մտածող գիտնական այնքան պարզամիտ չէր, որ մտներ այն ասպարեզը, որտեղ իր «գործիքները» չեն գործում: Ամեն մի գիտական գործիչ, վերջիվերջո, հանգում է նրան, որ այս նյութական աշխարհից անդին, կա նաև մի այլ աշխարհ, որը մենք անվանում ենք հոգևոր աշխարհ:

- Իսկ ինչպե՞ս եք վերաբերվում այն հարցին, երբ որոշ գիտնականներ, Հիսուս Քրիստոսի գործած հրաշքներին տալով գիտական բացատրություններ, փորձում են մերժել նրա Աստված լինելը:

- Ես կարծում եմ, որ հրաշքները չէին, որ Հիսուս Քրիստոսին պետք է դարձնեին Աստված, այլ նրա քարոզությունը և գործերը: Չէ՞ որ Հիսուս ինքը հրաժարվեց նշաններ ցույց տալ՝ իր Աստված լինելն ապացուցելու համար: Անշուշտ, մի քանի դար առաջ եղած երևույթները, որոնք ժամանակակիցների կողմից կարող էին հրաշք համարվել, այսօր ստանում են իրենց գիտական բացատրություններն ու սկսում ընկալվել որպես բնական երևույթներ: Այնուամենայնիվ, Հիսուս Քրիստոսի արած գործերի արդի գիտական բացատրությունները չեն կարող խախտել Հիսուս Քրիստոսի հեղինակությունը որպես Աստված: Նրա ամենամեծ հրաշքը եղավ մարդկանց վերադարձնել կորսված երկնքի արքայությունը: Ես կողմնակից եմ այդ հրաշքների հարցն անգամ չքննարկելուն:

Պատրաստեց Հարություն սրկ. Քեշիշյանը

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Եկեղեցական երաժշտությունն իրավամբ կարելի է կոչել ձայների աստվածաբանություն, ինչպես որ եկեղեցական պատկերագրությունը կոչում են գույների աստվածաբանություն: Եվ սա ոչ միայն այն պատճառով, որ եկեղեցական երգերի տեքստերն ունեն աստվածաբանական անհուն խորություն, որտեղից կարելի է քաղել եկեղեցու վարդապետության շատ մանրամասներ և նրբերանգներ, այլև զուտ երաժշտական տեսանկյունից: Այդ մեղեդիներն ամբողջացնում են հայրերի աղոթքը և մեզ, մասնակից դարձնելով նրանց աղոթական փորձառությանը, հաղորդ դարձնում Սուրբ Եկեղեցու հավիտենական ներկայությանն Աստծո մեջ:

Եկեղեցական երաժշտությունը մի համակարգ է, որը որպես եկեղեցական մշակույթի անբաժանելի մաս, ձևավորվել է երկար դարերի ընթացքում և Տիրոջ փառաբանության բնական ծնունդն է: Այն արտահայտությունն է եկեղեցու սուրբ հայրերի, շարականագիր վարդապետների և նրանց միջոցով նաև ողջ եկեղեցու առ Աստված տածած անսահման սիրո և երկյուղածության: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ մեղեդին անբառ աղոթքն է մարդկային հոգու:

Այս տեսանկյունից քրիստոնեական երաժշտությունը պետք է լինի ներդաշնակ, որպեսզի չքանդի հոգու ներդաշնակությունը, պետք է նոր երգ լինի, հանգստացնող, ցավերը մեղմող, չարը մոռացության մատնող, պետք է լինի անուշեղենի նման և տխրության դեղի պես, պետք է երգ լինի, որ ինքնատիրապետում է դաստիարակում:

Հոգևոր երգերի սուրբ խոսքերն ավելի ջերմորեն են բորբոքում մեր հոգիներն առաքինությամբ, երբ նրանք լավ են երգվում: Առ Աստված ուղղված մեր հոգևոր շարժումներից յուրաքանչյուրին հատուկ են ձայնային որոշակի ելևէջներ, որոնք ինչ-որ խորհրդավոր կերպով կարողանում են ունկնդրի հոգում ևս արթնացնել հոգևոր նույն շարժումը:

Երաժշտության կոչումն է վերականգնել մարդու անկման պատճառով ավերված աշխարհի ներդաշնակությունը. քրիստոնեական երաժշտությունը նոր կյանքի խորհրդանիշն է: Մարդու ողջ կյանքը պետք է վերածվի երաժշտության, ցնծագին երգի, Տիրոջ փառաբանության:

Երաժշտությունը ամենից ժամանակավորն է մշակույթի բոլոր տեսակներից, ամենից անցողիկը, ժամանակի մեջ անհետ կորչողը, բայցև մշակույթի միակ տեսակն է, որը միանում է անդրանցականին և մնում հավիտենության մեջ:

Պատրաստեց՝Հրաչյա-Ժորա Հակոբյանը

ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ

1948 թ. ՄԱԿ-ի կողմից ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 18-րդ հոդվածը հռչակում է մարդու մտքի խղճի ու հավատի ազատությունը, որը թույլ է տալիս մարդուն ազատ կամքով ընտրելու իր դավանանքը և համոզմունքները:

Հետաքրքիր է, որ մեր հասարակության մեջ այս ազատությունը տարբեր կերպ է ընկալվում: Ամեն դեպքում մեզ հետաքրքրում է Քրիստոնեական եկեղեցու ընկալումը:

Խղճի ազատության գաղափարը հումանիստական Արևմուտքի մտքի արդյունք է: Առաջին հայացքից տարօրինակ կարող է թվալ, բայց այն իր ակունքներով զուտ քրիստոնեական է: Կարող է հարց ծագել՝ մի՞թե քրիստոնյաներն անտարբեր են այլ կրոնական հայացքների տեր մարդկանց «մոլորությունների» հանդեպ կամ մի՞թե նրանք պիտի հանդուրժեն դրանք: Ցավոք սրտի, այսպիսի հարցերի սխալ ըմբռնումները կարող են խոչընդոտել մարդու մուտքը Եկեղեցի: Փորձենք քրիստոնեական տեսանկյունից դիտարկել ազատությունն առհասարակ և խղճի ազատությունը մասնավորապես:

Մարդու ազատության վերաբերյալ Եկեղեցու տեսակետը լավագույնս ձևակերպում է Պողոս առաքյալը. «Ամեն ինչ ինձ արտոնված է, բայց ոչ ամեն բան՝ օգտակար» (Ա Կորնթ. Զ 12ա):

Ազատությունը Եկեղեցու անբաժանելի մասն է, առանց որի չկա քրիստոնեություն: Աստվածաշնչի առաջին տողերից տեսնում ենք, որ մարդն ստեղծվել էր որպես ազատ էակ, նույնիսկ ավելին՝ մարդու ազատ կամքը Եկեղեցու հայրերը բնորոշում են որպես աստվածանմանություն: Եթե ուշադիր կարդանք Հիսուս Քրիստոսի Ավետարանը, կտեսնենք, որ աստվածային սերը հնարավոր չէ առանց ազատության: Աստվածաշնչում ներկայացվող Աստծո և մարդու փոխհարաբերության ողջ պատմությունը դրա մասին է վկայում:

Նույնը կարելի է ասել նաև խղճի կամ դավանանքի ազատության մասին: Եկեղեցու պատմության առաջին էջերից տեսնում ենք, որ քրիստոնյաները հալածվում էին իրենց դավանանքի համար, որն ընտրել էին ազատ կամքով: Ընդհանրապես, քրիստոնյա լինելը գիտակից ընտրության հետևանք է. առանց այս ազատ ընտրության չկա քրիստոնեական փրկություն:

Վերադառնալով քիչ առաջ տրված հարցադրումին՝ պետք է ասենք, որ Աստծու և երկրի վրա նրա գործը շարունակող Եկեղեցու ամենամեծ ցանկությունն ու նպատակն է, որ բոլոր մարդիկ հավատան Հիսուս Քրիստոսին, ունենան մեկ դավանանք, միևնույն քրիստոնեական սկզբունքները և ապրեն այդ սկզբունքների համաձայն: Իհարկե, Եկեղեցին անտարբեր չէ մարդկության հանդեպ, ինչպես անտարբեր չէ Աստված: Սակայն, Քրիստոսի սերը տարածող Եկեղեցին չի կարող իր քարոզն իրականացնել բռնությամբ կամ պարտադրանքով: Եկեղեցին մարդկանց միայն առաջարկում է փրկությունը, իսկ փրկվելու համար անհրաժեշտ է մարդու ազատ կամքը և ընտրությունը՝ անդամագրվելու Եկեղեցուն և ապրելու Քրիստոսի ցույց տված ճանապարհով: Քրիստոսին հետևելու նեղ ճանապարհը բաց է բոլորի համար...

Պատրաստեց Հարություն սրկ. Քեշիշյանը

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԻ

Երիտասարդությունը մարդու կյանքի այն շրջանն է, երբ նա փորձում է իմաստավորել իր կյանքը, իրեն շրջապատող աշխարհը և ամեն բան, որ կապ ունի իր հետ: Ցավոք, միշտ չէ որ այս ընթացքն անցնում է առանց բարդությունների և ավարտվում ճիշտ ելակետով: Նոր կյանք մտնող երիտասարդը մեծ հույսեր է կապում ապագայի հետ:

Երջանկության փնտրտուքի մեջ, սակայն, շատ հաճախ երիտասարդը կարող է հուսահատվել, կոտրվել՝ չկարողանալով հասնել իր հուսացած բաներին, գտնել իրեն փոթորկող հարցերի պատասխանները: Ամենակարևորը, նոր կյանք մտնող երիտասարդը կանգնած է միայնակ մնալու վտանգի առջև և փնտրում է այդ միայնակությունը հաղթահարելու տարբեր ճանապարհներ: Նրան անհրաժեշտ է հենարան, ապավինության տեղ, որից երբեք չի հիասթափվի, որը կիմաստավորի նրա կյանքը և չի թողնի անորոշ հուսահատության մեջ:

Այս կյանքի ալեկոծ ծովում իրական երջանկություն ու կյանքի իմաստավորում մեզ կարող է տալ միայն Քրիստոս, սիրելիներ, իր Սուրբ եկեղեցու միջոցով, որը Նա թողեց մեզ՝ որպես ընտանիք, որպես վեմ, որի վրա կանգնողը երբեք չի սասանվի: Եկեղեցի կոչվող քրիստոնեական մեծ ընտանիքն է, որ երբեք միայնակ չի թողնում մարդուն, նաև երիտասարդին, հոգում նրա կարիքները և պաշտպանում նրան:

Եկեղեցական կյանքը երիտասարդի համար արժեքային այնպիսի հիմք է դառնում, որով նա կայանում և ձևավորվում է որպես ազատ մարդ, որպես քաղաքացի և հասարակության լիարժեք անդամ, դառնում պատրաստ՝ դիմակայելու կյանքի յուրաքանչյուր փորձություն:

Եկեղեցին այն ընտանիքն է, որի կարիքն ունեն բոլոր մարդիկ, նաև մենք՝ երիտասարդներս:

Պատրաստեց Հարություն սրկ Տեր-Ասատրյան

ԻՆՉՈ՞Ւ ԵՄ ԵՍ ՔՐԻՍՏՈՆՅԱ

Կյանքը մեր առջև բազմաթիվ ճանապարհներ է բացում. ամեն օր և ամեն ժամ մենք բախվում ենք ընտրության խաչմերուկներին՝ կերտելով մեր ապագան և լրացնելով մեր կյանքի մատյանը անջնջելի թանաքով: Մեր ազատությունը քաղցր և արբեցուցիչ գինու պես է, սակայն նրա մրուրը դառն է և երբեմն՝ թունալի: Մեր ընտրված ճանապարհների վերջնական արդյունքը կերտում է մեր ներքին, խորունկ աշխարհը և, ըստ այդմ, դրոշմում է մեր ինքնությունը:

Իմաստուններից մեկն ազատությունը նմանեցրեց անարատ կաթին, որը շուտ է թթվում անմաքուր անոթի մեջ: Այդպես և մեր ազատությունը հաճախ դառնում է անպիտան և բազմաթիվ չարիքների պատճառ: Հաճախ ես ինքս ինձ հարցնում էի, թե ո՞րն է այս ամբողջ թոհ ու բոհի իմաստը, արդյո՞ք այսքան խղճուկ է կյանքը, որ մարդ անգամ չի գիտակցում իր ինչ լինելը, գալիս է այս աշխարհ մերկ և կույր և ելնում է՝ տառապանքներով ու ցավերով լի:

Հարցերիս պատասխանը գտա Սուրբ Ավետարանի մեջ: Իրոք, աշխարհը իմաստավորվում է Տիրոջ երկնային լույսի ներքո: Երբ ընկալում ես քո կյանքն ինչպես մի չնչին ճանապարհ դեպի հավիտենականություն, այնժամ կարծես ամեն բան իր տեղն է ընկնում: Այն ժամանակ հարցերն սպառվում են և սկսում է գործնական, իմաստավորված ընթացքը՝ շնորհազարդված Եկեղեցու Սուրբ խորհուրդների զորությամբ և լուսավորված Տիրոջ սիրո հայտնությամբ՝ Սուրբ Ավետարանով:

Ինձ համար քրիստոնեությունը լի է ուրախությամբ, այն ուրախությամբ, որն աշխարհն այդպես էլ չճանաչեց: Տիրոջ սերը, մարմնավորված Իր Սուրբ Խորհուրդների մեջ, արդեն այս կյանքում մեզ հաղորդակից է դարձնում գալիք Արքայությանը և իմաստավորում մեր ազատությունը, բացում մեր սրտերի աչքերը և նորոգում մեր մտքերը հոգևոր իմաստությամբ՝ մեզ դարձնելով ժառանգորդ հավիտենական սիրո արքայությանը:

Կյանքը մեր առջև բազմաթիվ ճանապարհներ է բացում, սակայն ինձ համար հավատարիմ և արդար է Նա, ով ասաց. «Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը»...

Պատրաստեց՝ Դավիթ դպիր Գիշյան

ՃԵՄԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ո՞վ է այսօր հայ հոգևորականը: Աստծո խոսքով զինված մի ծառա-առաջնորդ է, որի կարևորագույն առաքելությունն է Քրիստոսի Ավետարանը մատչելի դարձնելը և որպես արդյունք՝ Եկեղեցու միջոցով Երկնքի արքայությունը երկրի վրա տեսանելի դարձնելը: Մեր իրականության մեջ սրան է շաղախվում նաև հայ ժողովրդի ինքնության պահպանությանը միտված գործունեությունը, որով ամբողջանում է հայ հոգևորականի կոչումը:

Հենց այս կոչման գիտակցումով լուսավորված, ժամանակակից հասարակության ձեռքբերումների և խնդիրների հետ համընթաց քայլող հոգևորականներ պատրաստելու վեհ տեսիլքով է, որ Գևորգ Դ Մեծագործ հայրապետը շուրջ 140 տարի առաջ հիմնադրեց Գևորգյան հոգևոր ճեմարանը:

Այսօր մեր սաների ժամանակակից սերունդն իր համար որպես ոգեշնչումի աղբյուր ունի նշանավոր ճեմարանականների հոգևոր ու ազգային այնպիսի գործիչների, ինչպիսիք են Կոմիտաս Վարդապետը, Ակսել Բակունցը, Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը և այլք: Վերջիններիս օրինակով մերօրյա ուսանողները երբեք չեն պարփակվում միայն Մայրավանքի առօրյա կյանքի մեջ, այլ իրենց ուսանածն ու հոգևոր փորձառությունը դարբնելով Մայր Աթոռում՝ լայնորեն ու համարձակ բացվում են թե՛ իրենց հետ ամեն օր աղոթակից հավատացյալներին և թե՛ վանքից դուրս իրենց տարեկից երիտասարդներին:

Փոխվել են ժամանակները, փոխվել է ժամանակակից մարդը: Սակայն նույնն են մնացել մարդկային բարձրագույն արժեքներն ու առաքինությունները՝ նվիրում, անձնազոհություն, անկուտրուն հավատք, ազգասիրություն, և այլն: Որպես ճեմարանականներ՝ մեր առաքելությունն է արմատավորվել այս սկզբունքների և արժեքների հողում ու պտղաբերել՝ ի սեր Քրիստոսի և հայրենիքի:

Պատրաստեց Զաքարիա դպիր Թադևոսյան

Մեր ֆեյսբուքյան հասցեն է՝
www.facebook.com/gevorgianseminary

Ձեր հարցերը կարող եք ուղղել մեզ հետևյալ էլ. հասցեով՝
gevorgianseminary@gmail.com

Հասցե՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գևորգյան հոգևոր ճեմարան
Հեռախոս՝ (010) 510 180